ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ (DHCS) ԿՈՂՄԻՑ ԼԵԶՎԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲՈՂՈՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ

(ԳԼՈՒԽ VI ԵՎ Երկլեզու ծառայությունների մասին Դիմալի-Ալատորի օրենքը)

ՀԱՅՑՎՈՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Նահանգային և դաշնային օրենսդրության պահանջների համաձայն, անգլերենի սահմանափակ իմացությամբ անձանց Կալիֆոռնիա նահանգի առողջապահական ծառայությունների վարչությունը պետք է ծառայություններ մատուցի բացի անգլերենից նաև այլ լեզուներով:

Դաշնային օրենսդրության մեջ ամրագրված է, որ դաշնային բյուջեից ֆինանսական միջոցներ ստացող բոլոր կազմակերպությունները պետք է ձեռնարկեն գործողություններ՝ երաշխավորելու համար, որ ֆինանսական նման միջոցները չօգտագործվեն խտրականություն առաջացնող նպատակներով: Կալիֆոռնիայում Medi-Cal-ի գծով օժանդակություն տրամադրող բոլոր անձինք ու կազմակերպությունները պետք է հարգեն սպառողների իրավունքները և արգելեն խտրականությունը Medi-Cal-ի ծառայությունների մատուցման ժամանակ, այդ թվում՝ անգլերենի սահմանափակ իմացությամբ (LEP) անձանց համար ծառայությունների հասանելիության ապահովման ընթացքում: Առողջապահական ծառայությունների վարչության (DHCS) քաղաքացիական իրավունքներ գրասենյակը (OCR) սահմանել է բողոքների ներկայացման այս գործընթացը Medi-Cal-ի հաճախորդների համար՝ բարձրաձայնելու լեզվական հասանելիության հետ կապված ենթադրյալ խտրականության դեպքերը՝ ուղղված ցանկացած անհատի կամ կազմակերպության դեմ, որոնք, իրենց կարծիքով, իրականացնում են նման խտրականություն:

Խտրականության հայցերի ներկայացման մասով հայցվորն իրավունք ունի.

- գրավոր հայց ներկայացնել Առողջապահական ծառայությունների վարչության (DHCS) քաղաքացիական իրավունքների գրասենյակ (OCR)՝ ենթադրյալ հակաօրինական խտրականության դեպքից մեկ տարվա (365 օր) ընթացքում: Գրավոր հայցում պետք է նշված լինեն որպես խտրականություն ընկալվող գործողությունները, ինչպես նաև հայցվորի կողմից պահանջվող հատուցման հստակ միջոց(ներ)ը:
- Ներկայացնել հայց Քաղաքացիական իրավունքների մասին 1964 թ. օրենքի Գլուխ VI-ի, ինչպես նաև կիրառելի նահանգային և դաշնային օրենքների դրույթների համաձայն Դաշնային սոցիալական ծառայությունների նախարարության քաղաքացիական իրավունքների գրասենյակ (HHS OCR) և (կամ) Առողջապահական ծառայությունների վարչության (DHCS) քաղաքացիական իրավունքների գրասենյակ (OCR): Գլուխ VI-ն օգտագործելով հայց ներկայացնելու դեպքում այն պետք է ներկայացվի խտրականություն ենթադրաբար հանդիսացող գործողության օրվանից հարյուր ութսուն (180) օրվա ընթացքում:
- Անկողմնակալ հետաքննության:
- Գործընթացի բոլոր փուլերում հայցվորի կողմից ընտրված և վարձատրվող ներկայացուցչի ներկայության:
- Չենթարկվելու խափանման միջոցների, միջամտության, հարկադրանքի կամ վրեժի:
- Դիմել Դաշնային սոցիալական ծառայությունների նախարարության քաղաքացիական իրավունքների գրասենյակ (HHS OCR)՝ Առողջապահական ծառայությունների վարչության (DHCS) քաղաքացիական իրավունքների գրասենյակի գործողությունները ստուգելու խնդրանքով:

Հայցվորը պատասխանատվություն է կրում.

Բողոքների ներկայացման գործընթացի բոլոր փուլերի ընթացքում ճշգրիտ և փաստացի տեղեկությունների տրամադրման համար:
Ես կարդացել և հասկացել եմ այս իրավունքներն ու պարտականությունները:

ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

Տեղեկատվական գործելակերպի մասին 1977 թ. օրենքի (Կալիֆոռնիայի քաղաքացիական օրենսգիրք, բաժին 1798.1, և այլն) և Անձնական տեղեկությունների գաղտնիության մասին 1974 թ. դաշնային օրենքի (Գլուխ 5, ԱՄՆ օրենսգիրք, բաժին 552a, և այլն) պահանջների համաձայն այս ծանուցումը պետք է տրամադրվի անհատներից անձնական տեղեկությունների հավաքագրման դեպքերում:

Կալիֆոռնիայի առողջապահական ծառայությունների վարչության (Վարչություն) Քաղաքացիական իրավունքների գրասենյակին անհարժեշտ են այնպիսի տեղեկություններ, որոնց ներկայացնելը պահանջվում է Երկլեզու ծառայությունների մասին Դիմալի-Ալատորի օրենքի և Քաղաքացիական իրավունքների մասին 1964 թ. օրենքի Գլուխ VI-ի դրույթներով նախատեսված Լեզվական հասանելիության ձևաթուղթը լրացնելու համար:

Այս դիմումը ներկայացնելու համար անհրաժեշտ տեղեկությունների տրամադրումը կամայական է. այնուամենայնիվ, տեղեկություններն ամբողջությամբ և ճշգրտորեն չտրամադրելու դեպքում Վարչությունը կարող է չունենալ Հայցվորի հետ կապ հաստատելու հնարավորություն: Տեղեկությունների ներկայացման հիմնական նպատակը Հայցվորի հետ հաղորդակցվելը և (կամ) խտրականության մասին մեղադրանքների վերաբերյալ լրացուցիչ տեղեկությունների մասին դիմումներ ներկայացնելն է:

Վարչությունը տեղյակ չէ այս տեղեկությունների բացահայտման կանխատեսելի հնարավորությունների մասին: Այնուամենայնիվ, մեղադրանքները դատարան փոխանցելու դեպքում դրանց բացահայտումը կարող է պարտադիր դառնալ: Հայցվորն ունի դեպի Վարչության կողմից անձնական տեղեկություններ պարունակող գրառումներ մուտք գործելու իրավունք:

Ստորագրություն	Ամսաթիվ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ԱՐՏԱՔԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅՑ, ԼԵԶՎԱԿԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆ

Լրացնել և վերադարձնել՝

Առողջապահական ծառայությունների վարչություն, քաղաքացիական իրավունքների գրասենյակ
PO Box 997413, MS 0009
Sacramento, CA 95899-7413

ԱՆՈՒՆ՝	ԱՄՍԱԹԻՎ՝
ՀԱՍՑԵ՝	ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ՝
ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ՝ ( )	

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ/ԱՆՁԻ ԱՆՈՒՆԸ՝	ՊԱՇՏՈՆԸ՝	ԴԵՊՔԻ ԱՄՍԱԹԻՎԸ՝	ՀԱՍՑԵՆ/ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐԸ՝

Լեզվական հասանելիության խնդիրներ (նշեք կիրառելի բոլոր կետերը)՝

- ☐ թարգմանչական ծառայությունների մասին հասարակությանը տեղեկացնող նշանների բացակայություն
- ☐ Բազմալեզու ձևաթղթերի/նյութերի բացակայություն
- ☐ Երկլեզու անձնակազմի բացակայություն
- ☐ Այլ՝

Ձեր բառերով նկարագրեք, թե ինչպիսի գործողություն(ներ) է (են) ձեռնարկվել, որոնք թույլ են տվել ձեզ եզրակացնելու, որ ձեր դեմ խտրականություն է իրականացվել:

Նշեք, թե ինչպիսի լուծում եք ակնկալում:

Ես հասկանում եմ, որ վերոնշյալ տեղեկությունները ճշգրիտ են և ամբողջական այնքանով, որքանով ես տեղյակ եմ:

ՀԱՅՑՎՈՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ՝	ԱՄՍԱԹԻՎ՝